Նար-Դոս

Մանուկ

Սիրուն մանուկը ուրախ ու զվարթ
Վազեց, վազվզեց, այս-այն կողմն ընկավ
Եվ երբ հոգնեցավ, անվիշտ ու անդարդ
Հանգստյան ժամուն քաղցր նինջ մտավ:

Եվ որպես աստղ ժպիտը պայծառ
Նրա դեմքի վերա խաղում էր մեղմիկ:
Եվ ոչինչ երազ սոսկալի և չար
Բնավ չէր խանգարում նրա նինջը քաղցրիկ:

Ո՜հ, մանո՛ւկ, մանո՛ւկ, որքա՜ն սիրուն ես,
Ո՜րպես խաղաղ է, կայտառ է հոգիդ,
Եվ որպե՜ս անուշ դու բարբառում ես
Տեսիլների հետ քաղցր երազիդ:

Բայց, ավա՜ղ, մանուկ, կըգա ժամանակ,
Երբ անհոգ կյանքդ թույնի կըփոխվի,
Եվ մանկությանդ դառը հիշատակ
Կըմնա սրտումդ և քեզ կըմաշի...

Եվ դեմքիդ վերա քաղցր ժպտի տեղ
Վիշտն ու հոգսերը կնիք կըդնեն,
Եվ գիշերները երազներ ահեղ

Կարճատև քունդ միշտ կըվրդովեն...

Սակայն տե՛ս, մանուկ, տրտունջ չի հանես,
Այդ է քո ճամփան փշոտ ու խոպան,
Այլ գնա՛ խրոխտ, գնա՛՝ աներես,
Թող հավատն ու հույսը քեզնից չհեռանան:

Ճգնի՛ր դու լինել զինվոր անվեհեր
Բախտի դեմ ոսոխ անխուսափելի,
Եվ միայն այդ կռվում կարող ես գտնել
Դու երջանկություն սրտիդ ցանկալի:

Եվ կըգա դարձյալ մի օր, օր պայծառ,
Երբ տանջված հոգիդ կըգտնե հանգիստ,
Եվ այնուհետև դու անհոգ իսպառ
Կըմտնես արդեն քաղցր նինջ ընդմիշտ:

3 փետր. 1886.